

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 42/14

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 05.06.2018թ. N4102602 ակտի դեմ Ա/Ձ Հայկ Սանդրոսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը հայտնում է, որ Երևան քաղաքի Կիևյան 22/41 հասցեում տեղակայված մթերային խանութում օրենքով սահմանված կարգով իրականացնում է մանրածախ առևտուր: Սույն թվականի մայիսի 11-ին, խանութ է մտել մի տղամարդ և ներկայացել որպես հարկային տեսուչ և ասել, որ իրեն տուգանելու են 150000 ՀՀ դրամի չափով, քանի որ խախտել է օրենքը, այն է՝ խանութից քիչ առաջ գնում կատարած կնոջը ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը տեսուչին պատասխանել է, որ գնորդներին մշտապես ՀԴՄ կտրոններ տրամադրում է՝ կատարված վճարման արժեքը ճշգրիտ չափով մուտքագրելով ՀԴՄ, հետևաբար տեսուչի նկարագրած իրավիճակն իրականությանը չի համապատասխանում, քանի որ իրենց խանութ մտնելուց առաջ ոչ ոք 270 ՀՀ դրամի առևտուր չի կատարել: Տեսուչն ասել է, որ այդ կինն իրենց տեսչության աշխատակից է և մասնակցում է ստուգումներին: Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը պնդել է, որ այդ կինը վերադառնա և ցույց տա գնված ապրանքը: Սակայն իր պահանջը մնացել է անպատասխան, դրա փոխարեն տեսուչն իր առջև դրել է ինչ-որ փաստաթուղթ՝ ասելով, որ ստուգումներ իրականացնելու հանձնարարագիր է և նա պետք է ստորագրի այն: Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը հրաժարվել է նշված փաստաթղթերին ծանոթանալ և դրանք ստորագրել, որից հետո տեսուչն իր ՀԴՄ-ի վրա ինչ-որ տպումներ է արել և հեռացել: Որից հետո 05.06.2018թ. փոստային ծառայության միջոցով ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 6 բաժնի կողմից կազմված N4102602 ստուգման ակտի մեկ օրինակը:

14.05.2018թ. փոստային ծառայության միջոցով Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը ստացել է N4102602 ստուգման ակտի նախագիծը, N4102602 ստուգման հանձնարարագիրը, հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: Վերջինիս համաձայն Շենգավիթի հարկային տեսչության տեսուչներն իր խանութում իրականացրել են հսկիչ գնում, հայտնաբերել են կատարված վճարման արժեքը ՀԴՄ չմուտքագրելու դեպք և արձանագրել են ՀԴՄ շահագործման կանոնների խախտում:

Սույն թվականի հունիսի 16-ին փոստով Շենգավիթ հարկային տեսչությունից Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը ստացել է N4102602 ակտը, որի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտին ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Բողոքաբերը գտնում է, որ նշված ակտը պետք է անվավեր ճանաչվի, քանի որ ակտի կատարման հիմք հանդիսացող N4102602 արձանագրությունը կազմված է կեղծ տեղեկությունների հիման վրա: Մասնավորապես՝ ք.Երևան, Կիևյան 22/41 հասցեում գտնվող խանութում 11.05.2018թ. ժամը 14:56-ին 270 դրամի գնում չի կատարվել: Այդ պահին խանութում կին գնորդ չի եղել, արձանագրության տակ ստորագրած միայն մեկ տեսուչի է տեսել: Կին գնորդը չի վերադարձրել և ցույց չի տվել գնված ապրանքը:

Հարկային տեսուչները կեղծ տեղեկություններ են ներառել արձանագրության մեջ, ինչն էլ հիմք է հանդիսացել օրենքի սխալ կիրառմամբ ոչ իրավաչափ ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերով՝ Ա/Ձ Հայկ Սանդրոսյանը խնդրում է չեղյալ համարել 05.06.2018թ. N4102602 ստուգման ակտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 08.05.2018թ. N4102602 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Հայկ Սանդրոսյանի մոտ կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 05.06.2018թ. N4102602 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 150.000 ՀՀ դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ֆիզիկական անձ Քրիստինե Հայրապետյանի կողմից 11.05.2018թ. ժամը 14:56-ին ք. Երևան, Կիևյան 22 41 հասցեում գտնվող խանութից կատարվեց գնում 270 դրամի չափով՝ 1 տուփ «Օրբիտ» և 1 տուփ «Վրիջլիս» տեսակի մաստակներ 150 և 120 դրամ արժողությամբ: Վաճառողուհին գամարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:59-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 1800 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 270 դրամը, ժամը 15:00-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15:00-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 270 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ կիրառության կանոնների 17-րդ կետի պահանջները:

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով

կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ պատասխանատու անձը պարտավոր է՝

1) հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել գումարը, որոշել ընդհանուր գումարն ու տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն.

2) ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել կտրոն, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակելու նպատակով վիճակահանության (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող կտրոն:

ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ նույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 150 հազար դրամի չափով:

Քննարկվող դեպքում, ֆիզիկական անձ Քրիստինե Հայրապետյանի կողմից 11.05.2018թ. ժամը 14:56-ին ք.Երևան, Կիևյան 22 41 հասցեում գտնվող խանութից գնվել է երկու տուփ մաստակ, որի համար վճարվել է 270 դրամ: Սակայն վաճառողուհին գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել:

Ստուգման ընթացքում կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը հիմնավորվել է ստուգման ընթացքում ձեռք բերված ապացույցներով: Մասնավորապես, գնումը կատարելուց հետո ժամը 14:59-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 1800 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը, ժամը 15:00-ին ՀԴՄ է մուտքագրվել 270 դրամը և նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը:

Դիմում-բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ խախտվել են ՀՀ հարկային օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ սահմանված կարգով չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, հարկ է նշել, որ նշված պնդումները հիմնավոր չեն, քանի որ խախտումն հայտնաբերելուց անմիջապես հետո Ա/Ձ Հայկ Սանդրոսյանին է ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, սակայն վերջինս հրաժարվել է ծանոթանալ, ստորագրել և ստանալ դրա

մեկ օրինակը: Այդ մասին հանձնարարագրի դարձերեսին կատարվել է համապատասխան գրառում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ հիմնավորվել Ա/Ձ Հայկ Սանդրոսյանի կողմից Ակտում հիշատակված իրավանորմերի պահանջների խախտման հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 05.06.2018թ. N4102602 ակտի դեմ Ա/Ձ Հայկ Սանդրոսյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

